Հ. Ռ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԸ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի բնիկների կոսմիկական պատկերացումների մեջ արևի, ամպրոպի, որոտի, բնության երեք գլխավոր ուժերի պաշտամունքին զուգընթաց զոյություն է ունեցել նաև լուսատուների պաշտամունքը, որը համընդհանուր է մարդկային պատմության նախնադարյան ժամանակաշրջանի համար և բավականաչափ վաղ է ծագել Հայկական լեռնաշխարհում, քանի որ այն Առաջավոր Ասիայի ամենաարարձրադիր ծայրագագաթն էր աստղային երկինքն ու համաստեղությունները հարմար դիտելու համար։

Լուսատուների ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում հնագիտական՝ բանահյուսական, ազգագրական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրված, որ նախնադարյան մարդիկ, լուսատուներն ու նրանց համաստեղությունները պատկերացրել են կենդանիների կերպարանքով։

Լուսատուների կենդանակերպ պատկերներից բացի, բրոնզեդարյան արվեստի ու պաշտամունքի առարկաների վրա հաճախ հանդիպում են նաև երկրաչափական մարմիններ՝ շրջանակների, աստղերի, պարույրների, անկյունավոր կամ եռանկյունիներից կազմված բազմաձև մարմինների ձևով, որոնք նույնպես խորհրդանշում են առանձին լուսատուների կամ նրանց համաստեղությունների դաղափարը։

Կասկածից վեր է, որ միևնույն լուսատուները կամ նրանց առանձին խմբերն ունեցել են քոլորովին հավասարազոր կենդանակերպ և երկրաչափական արտահայտումներ, ինչպես այդ դիտվում է Առաջավոր Ասիայում, Հունաստանում և այլուր։ Նախնադարյան արվեստի մի շարք նոր նյութեր ցույց են տալիս, որ լուսատուները Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան բնակիչների կողմից պատկերացվել են նաև մարդկային կերպարանքով, ինչպես այդ ընդունված էր ողջ Առաջավոր Ասիայում։

Լուսատուների երկրաչափական խորհրդանիշներ հանդիպում են Հայաստանի ժայռապատկերների հարուստ կոմպոզիցիաներում, բրոնզե զոտիների, սրերի ու դաշույնների, մի շարք այլ առարկաների վրա։

Այսպես, Դեղոտմա լեռներում հայտնաբերված ժայռապատկերներում[1] հանդիպում են ոչ միայն առանձին լուսատուների նշաններ, այլև նրանց ամբողջական խմբեր կամ համաստեղություններ։ Դրանցից մեկը կազմված է մի քանի շրջանակներից, որոնք ներսից նույնպես ունեն կրկնակի և ավելի շրջանակներ կամ կիսաշրջաններ։ Այս խմբի միջին հատվածում պատկերված շրջանակը, ի տարբերություն մյուսների, իր մեջ ամփոփում է հետզհետե փոքրացող տրամագծերի երեք շրջանակներ՝ ընդհատվող գծերով։ Բազմակի այս շրջանակի մի ծայրին հարում է երկարավիզ թռչունի գլուխ, մյուս ծայրին՝ ձգված պոչաձև փորվածք։ Այս երեք մարմինները միասին խիստ ոճավորված թռչունի տպավորություն են թողնում։

Բացի շրջանակներից, աստղային սիմվոլների այս խմբի կամ համաստեղության մեջ մտնում են նաև խաչաձև մի քանի փորագրանդակ, կողքի փոքր շրջանակով, և փոքր-ինչ ավելի ծավալուն մի օվալ։ Առկա են նաև երեք այլ մարմիններ՝ օվալաձև սրագագաթ մի մարմին և ոճավորված մի պատկեր, որն իր տարածած թևերի շնորհիվ նմանվում է թռչունի։

Այս համաստեղության կենտրոնում, ներքին ընդհատվող գծերով լցված շրջանակը բավական նման է անիվի և կարող է մեկնաբանվել իբրև արևի խորհրդանիշ, մանավանդ, որ սրան է հա-

---

1 Մենք օգտագործել ենք ժայռապատկերների՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահպանվող համապատասխան դրչանկարները, որոնք հանձնվել են 1965—66 թթ. ընթացքում ճարտարապետ Ս. Պետրոսյանի կողմից։

բում վերևից խիստ ոճավորված թռչունի պատկերը՝ արևային աստվածության կցորդն ու փոխանորդը։

Արագածի ստորոտներում Ա. Քալանթարի կողմից հայտնաբերված ժայռապատկերների[2] շարքում նույնպես հանդիպում է նման մի սյուժե։ Այն իրենից ներկայացնում է երկար կտուցով և բավական կլոր իրանով, երկարավիզ մի թռչուն, որը շրջապատված է չորս շրջանակներով։ Սրանցից ամենավերևինը իր մեջ ունի խաչաձև չորս շառավիղ՝ նմանվելով արև-անիվին։

Գեղամա լեռների ժայռաքանդակ, կամ ավելի ճիշտ ժայռագիր-ժայռափոր, նկարների մի այլ խմբում պատկերված է սվաստիկա, ներքևից նրան հարող վեց մանր շրջանակներով։ Կարելի է ենթադրել, որ այստեղ ներկայացված են արևը, լուսինը և հինգ մոլորակները։ Այս համաստեղությանը շատ մոտ կանգնած է մի խոյ՝ եղջյուրներից մեկի վրա երեք խոշոր շրջանակներով։ Անկասկած, այս էլ երկնային ուժերը մարմնավորող էակ է, եթե հաշվի առնենք, մանավանդ, եղջյուրների խոշոր շրջանակները։

Այս խմբից ոչ հեռու, նույն ժայռաբեկորի վրա, քանդակված է մի այլ պատկեր։ Այն բաղկացած է ցրված շառավիղներ ունեցող անվանման մեծ շրջանակից (որը մեր կարծիքով նույն արևի նշանն է), վերևից նրան հարող այծի պատկերից և ինչ-որ գիշատիչ, անորոշ կենդանու գծագրությունից։

Հետաքրքիր է, որ հայ բանահյուսության մեջ այծերը հաճախ հանդես են գալիս իբրև լուսատուները խորհրդանշող կենդանիներ, իսկ հին արևելյան և հունական շատ առասպելներում՝ որպես երկնային աստվածությունների հովանավոր ու սնուցող։

Վերջապես, Գեղամա լեռների ժայռապատկերների մեջ հիացմունք է պատճառում սվաստիկա-արևի արտահայտման մի այլ դրսևորում, որն այնքան հաճախ է հանդիպում նախնադարյան արվեստում։

Արագածի ստորոտներին Ա. Քալանթարի կողմից հայտնաբերված ժայռապատկերների մեջ նույնպես հանդիպում են սվաստիկաների զանազան պատկերներ։

Այս ժայռապատկերներից մեկի վրա[3] ներկայացված է իրար միացված երկու սվաստիկա, որոնցից մեկի թևը զիգզագաձև գալարվելով ավարտվում է պարույրի պատկերով։ Պարույրի ներքին ծայրը նման է օձագլխի։ Սա հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հին արվեստում այդքան տարածված պարույրի մոտիվը առաջացել է գալարվող օձի գաղափարից և դառնալով նրա ոճավորված ձևերից մեկը, ներկայացվել է իբրև երկնային երևույթ, էակ, կամ մարմին։ Նկարագրված սվաստիկաների տակ ներկայացված է մի հարուստ «կոմպոզիցիա»՝ այծերի, օձի և մարդու պատկերներից բաղկացած, որոնք բոլորն էլ կարծես աստրալ նշանակություն ունեն։

Ինչպես տեսնում ենք, մեր նկարագրած բոլոր ժայռապատկերներում լուսատուների երկրաչափական պատկերների մոտ գտնվում են մանր եղջերավոր կենդանիներ։

Նախնադարյան մարդու պատկերացումների և ըմբռնումների համաձայն, ինչպես այդ երևում է շումերական առասպելներից և այլ աղբյուրներից, երկնային լուսատուները՝ աստղերն ու մոլորակները պատկերացվել են հենց այծերի ու ոչխարների կերպարանքով։

Շումերական առասպելներից մեկում[4] ասվում է, թե յոթ գլխավոր և հիսուն այլ աստվածների կողմից ստեղծված կավե հովիվը՝ աստվածային երիտասարդը, երկնքից իջեցրեց ոչխարների ու այծերի հոտերը, որոնք արածել սկսեցին երկրային լայնատարած մարգագետիններում։

Ինչպես ստորև կտեսնենք, Հայաստանի հնագարյան բնակիչներն էլ նման պատկերացումներ ունեին։

Ժայռապատկերների վրա ներկայացված երկնային պաշտամունքների՝ էնեոլիթյան և ավելի ուշ ժամանակներին վերաբերող վերը քննարկված մոտիվները, ուրեմն և նրանց արտահայտած գաղափարները, պահպանվում են նաև ուշ բրոնզեդարյան էպոխայում մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերին։

Այս անգամ լուսատու-կենդանիներին մենք տեսնում ենք նաև Հայաստանի տարբեր շրջաններում գտնված բրոնզե գոտիների վրա։

---

2 Լ. Ա. Բարսեղյան, Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1966, նկ. 2։

3 Լ. Ա. Բարսեղյան, նշվ. հոդվածը, նկ. 9։

4 Д. Г. Редер, Мифы и легенды древнего Двуречья, Москва, 1965, стр. 31.

Դրանցից մեկը հայտնի է Քալաքենտում Բելքի կողմից գտնված 1890 թ. ուշ բրոնզե դարին պատկանող դամբարաններից մեկի պեղումներով[5] (նկ. 1)։

Նկ. 1

Գոտու եզրերը զարդարված են հանդիպակաց կոր գծիկներով և եռանկյունաձև զարդանախշով։ Նրա ձախ կեսում պատկերված են մի խումբ այծեր, իսկ աջում՝ այծեր և եղջերուներ։ Կենտրոնում տեղադրված են խոյի եղջյուրների նմանվող պատկերներ, որոնցից վեր կանգնած է դառան նման մի կենդանի՝ բերանից զիգզագաձև իջնող բարակ գծիկով։ Սրա մարմինը զարդարված է կետագծային եռանկյունիներով, իսկ մյուս կենդանիները՝ կարճ կոր գծիկներով, ցան. ցատիպ նախշով կամ կետերով։

Գոտու վրա ներկայացված բոլոր եղջերուները թևավոր են[6], հանգամանք, որը մատնում է նրանց և նույն միջավայրում պատկերված մաներ եղջյուրավոր անասունների երկնային ծագումը։

Հազարամյակների խորքից եկող հայ բանահյուսության բացառիկ նյութերը համոզում են մեզ, որ քննարկվող պաշտամունքային բրոնզեդարյան գոտիների վրա ներկայացված եղջերուները, այծերն ու ոչխարները Հայկական լեռնաշխարհի նախաբնիկների կողմից դիտվում էին իբրև երկնային էակներ, իբրև լուսատուներ։

Բերենք բազմաթիվ օրինակներից մեկը.

Ճերմակ քոլոզով քուրդը,
Մեկ սուրու (հոտ) ոչխար կուշտը,
Չոր գիշեր աշխարքին կաշե[7]։

Այստեղ «Ճերմակ քոլոզով քուրդը» ներկայացվում է իբրև լուսին, իսկ ոչխարների հոտը՝ իբրև աստղաբույլեր։

Նույնպիսի արժեք ունի նաև՝

Մաղըմ վեգ
Մեյն անաքա[8]

հանելուկը, որի մեջ անիմիստական գաղափարաբանության սկզբունքով վեգերը փոխարինում են անասուններին՝ աստղերին, անաքան՝ լուսնին, իսկ մաղի միջոցով ներկայացվում է երկինքը։ Այս երկրորդ հանելուկը չափազանց հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ երկնային էակներն այստեղ ներկայացվում են ինչպես կենդանիների, այնպես էլ երկրաչափական ձևերի միջոցով, որոնք ուղղակի առնչվում են բրոնզեդարյան գաղափարաբանությանն ու պատկերացումներին։

Մենք չենք կասկածում, որ այս հանելուկները կարող էին ձևավորված լինել նախահայկական, նախնադարյան միջավայրում՝ հազարամյակներ առաջ։

Հայտնի է, որ օգտագործելով ժողովրդական հարուստ բանահյուսությունը Հովհաննես Թումանյանն էլ մեր դարի սկզբներին գրել է.

---

5 Ռ. Վիրխով, Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, «Ազգագրական հանդես», № 1, 1895, էջ 94, տախտակ 2։

6 Նույն տեղում, էջ 94—100, տախտակ 2, համ. 5-րդ։

7 Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, ուսումնասիրություն, Երևան, 1960, էջ 100։

8 Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 10։

Ամպերը դանդաղ ուղտերի նման,
սոր են՝ ջուր խմած՝ ձորից բարձրանում»[9]։

Քալաքենտի № 47 դամբարանից գտնված մի այլ գոտու բեկորի վրա[10] պատկերված են զանազան կենդանիներ՝ վայրի այծեր, անգղաոյուծներ, թռչուններ, ձիեր, ցուլեր, երկգլխանի էշեր ու օձ։ Կենդանիները կարծես կռվում են իրար հետ։ Օձը մարտնչում է անգղաոյուծներից մեկի հետ, որն իր բաց երեսով պատրաստ է կուլ տալու վերջինին (Նկ. 2)։

Նկ. 2

Կենդանիների միջև գտնվող լայնաթև խաչն ու բազմաթև աստղը, որն ավելի ծաղկի է նման, ենթադրել է տալիս, որ սրանք նույնպես երկնային էակներ են և խորհրդանշում են լուսատուներին։ Մի առանձին աստղ էլ, պարզապես, բազմած է անգղաոյուծներից մեկի պոչի վրա, հիշեցնելով

«Մի գոմ տավար ունիմ
Բոլորի հագին (պոչին) ծաղիկ է (խատուտիկ)»[11]

հանելուկը, որի պատկերազարդումը հեռու չէր լինի մեր նկարագրած կոմպոզիցիայից։

Հետաքրքիր է, որ երկգլխանի էշին շատ նման կենդանու պատկեր ենք տեսնում Կերկուկից գտնված մի կնիքի վրա։

Հավանաբար, երկգլխանի և բազմագլուխ կենդանիների պատկերացումը երկնքում տարածված երևույթ էր Առաջավոր Ասիայի շատ մարզերում՝ դեռևս հնագույն ժամանակներից սկսած։

Նկարագրվող գոտին երիզված էր կարճ-կոր գծիկներով, լայն ու հաստ վազող պարույրներով։ Վերջիններիս միջև եղած տարածությունը զբաղեցնում են անկյուններում օղակներով ավարտվող եռանկյունիները։ Եզրային այս զարդամոտիվից ցած երկշարք հյուսվածքային զարդանախշ ու փոքր կիսաշրջաններ են փորագրված, որոնց տակից գոտու ամբողջ երկարությամբ անցնում է կետերի մի շարք։

Նույն վայրից ծագող մի այլ բրոնզե գոտուց պահպանված փոքր բեկորի վրա փորագրված են փասիանների նմանվող թռչուններ և եղջերավոր անասուններ, որոնցից միայն մեկ-երկուսն են երևում՝ գոտու վնասվածության պատճառով[12]։

Հավանական է, որ այս թռչուններն էլ երկնային լուսատուների ուրույն արտահայտություններ լինեն։ Մեր այս միտքը կարող է հաստատել հայ բանահյուսության ընդերքից եկող հետևյալ հանելուկը.

«Մի հավանոց ունեմ,
Մեջը երկու թուխս կա իրենց ճուտերովը»[13]։

---

9 Մ. Ա ր ե ղ յ ա ն, Վիշապներ կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, 1941, էջ 64։

10 Ռ. Վ ի ր խ ո վ, Նշվ. աշխ., էջ 88, համ. 3-րդ, տախտակ 2-րդ։

11 Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Հայ ժող. հանելուկներ, Երևան, 1965, էջ 57։

12 Ռ. Վ ի ր խ ո վ, Նշվ. աշխ., էջ 101—103։

13 Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Նշվ. աշխ., էջ 10։

Այստեղ երկինքը մեկնաբանվում է իբրև հավանոց, արևն ու լուսինը իբրև թուխսեր, իսկ աստղերն ու մոլորակները՝ իբրև ճուտեր։

Բրոնզեդարյան գոտիների վրա և հեթանոսական շրջանից եկող հանելուկներում մարմնավորված կրոնապաշտամունքային ու գաղափարաբանական պատկերացումները շարունակում էին ապրել տակավին միջնադարյան գաղափարախոսության մեջ։

Անանիա Շիրակացու վկայությամբ հայկական կենդանակամարում, որն իր իսկ խոսքերով հայերը, հույները ու եգիպտացիները վերցրել էին բաբելացիներից, աստղային համաստեղությունները, կամ՝ ինչպես ինքն է դրում, աստեղատները, զանազան կենդանիների կերպարանք ունեն։ Աստղային համաստեղություններով էլ պայմանավորված են տարվա ամիսները, որոնցից յուրաքանչյուրը կենդանակամարում ունի իր նշանը։

Այսպես, ըստ Շիրակացու երկինքը 12 աստեղատան է բաժանված, որոնք կենդանակերպ են[14]։

Խոյը դրանցից գլխավորն է համարվում և շնորհատու, որովհետև խոյն էլ հոտի գլուխն է և պարգևատուն։

Թերևս մեր նկարագրած առաջին գոտու վրա այծերի ու եղջերուների միջավայրում պատկերված խոյի եղջյուրները և նրանից վերև կանգնած գառը դրա գլխավոր ու ղեկավարող իմաստի դրսևորումն են։ Գառն իր զարդանախշերով նույնիսկ տարբերվում է մնացած բոլոր կենդանիներից։

12 աստեղատները՝ տարվա 12 ամիսներն են։ Խոյը, ցուլը և երկրավորը խորհրդանշում են գարունը կենդանակամարում։ Խեցգետինն, առյուծն ու կույսը հատկանշում են ամառը, կշիռը, կարիճն ու աղաղնավորը՝ աշունը, այծեղջյուրը, ջրհոսն ու ձուկը՝ ձմեռը։

Թվում է, որ Հայաստանի տարբեր վայրերում գտնվող ժայռապատկերներից շատերը մասամբ առնչվում են կենդանակամարին, մասամբ էլ կապված են անասնապահության ու որսորդության պաշտամունքի հետ, պատկանելով, ըստ երևույթին, շատ ավելի վաղ ժամանակների, քան մեր բրոնզե գոտիները[15]։

Կիրովականի հիշատակված գոտու վրա էլ, բացի նրա երկու ծայրերը զարդարող ոճավորված խեցգետիններից, ներկայացված են բազմաթև աստղեր՝ իբրև լուսատուների երկրաչափական սիմվոլներ։

Գեղամա լեռների ժայռապատկերներում, մյուս կենդանիների համեմատությամբ, շատ ռեալիստորեն են արտահայտված այծերի ժայռափոր քանդակները։ Պատկերներից մեկի վրա ներկայացված են այծեր, մի դեպքում ձագի հետ միասին և մի վայրի ցուլ՝ մարտական կեցվածքով։

Այծերը կենդանակամարում ձմռան առաջին ամսվա խորհրդանիշն են, իսկ այծերի մոտ գտնվող ցուլի հոյակապ պատկերը կարծես դրսևորումն է կենդանակամարում գարնան երկրորդ ամիսը նշող վայրի ցուլի։ Ցուլի և այծերի մոտ շան նմանվող երկու կենդանիներ են պատկերված։

Այս ժայռապատկերների մի այլ խմբում պատկերված են երկու խոյ ու մի եղջերու։ Խոյերը մարմնի մանրամասներով (կառուցվածքով) շատ նման են վերը նկարագրած ժայռապատկերների այծերին, սակայն, ի տարբերություն նրանց, խոյերի եղջյուրները երկար են ու գալարուն, երբեմն էլ միահյուսվում են իրար՝ կիսաշրջան կամ կիսաօվալ կազմելով։ Խոյը կենդանակամարում խորհրդանշում է գարնան առաջին ամիսը։

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Գեղամա լեռներում գտնված ժայռապատկերները, որոնցից մի խմբի մոտ են հայտնաբերվել ստորև մանրամասն նկարագրվող վիշապաքարերից շատերը։ Ըստ երևույթին, լեռնային այս ընդարձակ տարածությունը եղել է պաշտամունքային սրբազան մի վայր՝ շրջապատված լերկ ու խիստ ժայռերով ու լեռներով, խորհրդավոր շունչ ունեցող բնապատկերներով։ Առանձնապես կենդանակամարի հետ են կապված, հատկապես, ժայռապատկերների մի քանի խմբեր։

Դրանցից առաջինում պատկերված է կարիճ (գլխի մոտ երեք շրջանակով), նրա երկու կողմերում՝ շուն և անհասկանալի մի այլ կենդանի։ Սրանցից քիչ հեռու գտնվում են նետ ու աղեղով

---

14 Ա. Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 20։

15 Վերջին երկու տարիների ընթացքում պեղվող Մեծամորի հոյակապ հուշարձանում, որի նյութական մշակույթը պատկանում է 3-րդ հազ. մ. թ. ա., հսկայական ժայռաբեկորների վրա պահպանվել են աստղեր, երկինք խորհրդանշող ժայռափոր պատկերներ։ Պետք է ենթադրել, որ հուշարձանի այս մասը ծառայել է որպես երկնքի և երկնային լուսատուների պաշտամունքի մի սրբատեղի։

զինված մարդու, ոճավորված խեցգետնի և չափազանց սաստիկ ոճավորված, անհասկանալի կենդանու փորագանդակներ։

Որ սրանք կապված են երկնային լուսատուների և կենդանակամարի գաղափարի հետ, ենթադրել է տալիս կարիճի առկայությունը։ Անկասկած, սա երկրային կարիճի պաշտամունք չէր կարող լինել, քանի որ լեռնային այս զովաշունչ շրջանը հնում էլ պետք է, որ նույնպիսի բնական պայմաններ ունենար, մինչդեռ կարիճները բնորոշ են չոր ու շոգ կլիմա ունեցող վայրերին։ Այդ իսկ պատճառով, հնարավոր ենք համարում մտածել, որ վերը նկարագրված կոմպոզիցիայում կարիճը կապված էր կենդանակամարում աշնան առաջին ամիսը խորհրդանշող գաղափարի հետ, մանավանդ որ, նրա մոտ, բացի երկու կենդանիների պատկերներից, փորագրված է նաև մի ձեռքում նետ ու աղեղ բռնած, մյուս ձեռքը պարզած մարդկային ֆիգուրը, որը գուցե և կենդանակամարում աշնան վերջին ամիսը խորհրդանշող աղեղնավորն է։

Այս խմբի հաջորդ ժայռաքանդակը իրենից ներկայացնում է ոճավորված խեցգետին, որն իր արտահայտչական ձևերով զարմանալիորեն նման է Կիրովականի՝ մ. թ. ա. 8-րդ դ. բրոնզե գոտու պատկերներին[16]։ Այստեղ առկա են կենդանակամարը կազմող, կարելի է ասել, բոլոր խորհրդանիշները՝ կարիճը, խեցգետինը, այծերն ու խոյերը, ցուլը, նույնիսկ աղեղնավորը և այլն։ Այս բոլոր պատկերները արտահայտված են խիստ ռեալիստորեն, որոշ դեպքերում են միայն ընդհանրացված, ոճավորված։

Ժայռաքանդակների մեկ ուրիշ խմբում ներկայացված է մարդկային հսկա մի ֆիգուր՝ տարածած թևերով։ Մարդու մարմինը արտահայտված է ողնաշարի և հինգական կողոսկրերի պարզունակ գծագրությամբ։ Նրա կողքին շատ ավելի փոքր մասշտաբի մարդուկ է փորագրված նույնպես կանգնած և թևերը տարածած վիճակում։

Մարդկային ֆիգուրները շրջապատող կենդանիների մեջ ընթերցվում են այծը, խոյը, երկու շուն, ոճավորված թռչունը և մի քանի անհասկանալի այլ կենդանիներ։

Գայթակղիչ կլիներ մտածել, թե հսկայամարմին ածդահան արտահայտում է կենդանիներին երկնքից վար իջեցնող աստվածության գաղափարը, իսկ նրա կողքին կանգնած մարդուկը՝ նրա ստեղծած հովվի կերպարը, այնպես, ինչպես Արագածում հայտնաբերված ժայռապատկերների վրա՝ սվաստիկաների ու պարույրի հետ միասին պատկերված այծերի ու մարդու՝ հովվի կերպարներն էին։

Խիստ ոճավորված մի այլ մարդ էլ, նույնպես տարածած ձեռքերով, պատկերված է մի խոյի և, թվում է, նետ ու աղեղ հիշեցնող առարկաների միջավայրում։

Այսպիսով, հավանական է, որ Գեղամա լեռների ժայռապատկերներում ներկայացված են լուսատուներ, կամ լուսատուների խմբեր, որոնցից յուրաքանչյուրն իր տեղն ունի կենդանակամարում։ Ինչպես Շիրակացին է ասում, սրանք շարժվում են տարվա չորս եղանակներին համապատասխան չորս տարբեր ուղղություններով և մի տարվա ընթացքում անցնում արևի, լուսնի ու յոթ մոլորակների ճանապարհը, որոնք իջնելով և բարձրանալով մոտենում են մեզ կամ հեռանում, դիշեր են բերում կամ ցերեկ, ջերմություն և ցրտություն, խոնավություն ու երաշտ և ղեկավարում են օդերի (եղանակների) ու ժամանակների փոփոխությունը[17]։

Լուսատուների պաշտամունքին է վերաբերում նաև 1935 թ. Նոր Բայազետի շրջանից գտնված գոտին[18], որն աչքի է ընկնում իր դարդամոտիվների ճոխությամբ և կենդանական պատկերների յուրօրինակությամբ։

Այն բաժանված է ութ կենդանազարդ մասերի, որոնք իրարից անջատվում են խորանարդիկներից, ծայրում օղակով ավարտվող ձգված անկյուններից, պարույրներից, ռոմբերից, փոքր Եռանկյունիներից ու դարձյալ ոճավորված թռչունից կազմված զարդամոտիվներով։

Գոտու մակերեսին պատկերված կենդանիների մեջ տեղ են գտել խիստ ոճավորված այծեր ու եղջերուներ, որոնց բաց բերանները ավելի երախի են նման՝ ցցված ժանիքների ու սրածայր լեզուների շնորհիվ։ Դրանք կանգնած են իրար դիմաց, յուրաքանչյուր վանդակում երկուական, բացի կենտրոնական մեկ վանդակից, որտեղ գտնվում են երեք եղջերու։

Այս կենդանիների գլխի և մեջքի մասը նման է դիշատիչ ձկների (գայլաձուկ) և միայն խիստ ոճավորված եղջյուրներից կարելի է կռահել, որ դրանք այծեր են։ Բոլոր կենդանիների վերջավո-

---

16 А. Л. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 215—216, նկ. 85։

17 Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1944։

18 А. О. Мнацаканян, Археологические находки в селении Басаргечар, Краткие сообщения института истории материальной культуры, 1955.

բությունները ավարտվում են օղակներով, որոնց առկայությունը ենթադրել է տալիս, որ դրանք երկնային լուսատուներ են։ Այդ կարծիքն ավելի է հաստատվում նրանով, որ կենտրոնական վանդակներից մեկում պատկերված երկու այծեր իրենց վրա կրում են հատվող գծերով շրջանակներ, որոնք լուսատուների սիմվոլներ են։

Գոտու վրա պատկերված բոլոր կենդանիները էլ դծագրված են խիստ մարտական դիրքով և, կարծես, պատրաստ են իրար հանդիպելու։ Եթե չլինեին նրանց վերջավորություններից կախված օղակները, հնարավոր կլիներ մտածել, թե մենք գործ ունենք մարտնչող վիշապների կամ վիշապաքաղների հետ՝ ելնելով նրանց գիշատիչ ձկնային տեսքից ու գլխների վրա տեղավորված եղջյուրներից։ Չէ որ վիշապներն ու վիշապաքաղները էլ երկնային տարերքի պաշտամունքը ներկայացնող կենդանիներ են։

Միջագետքում էլ այծաձկան-վիշապաքաղի մասին որոշ գիտնականներ այն կարծիքն են հայտնում, որ աստղերի խմբերը հնում մարդիկ պատկերել են այս ֆանտաստիկ կենդանու տեսքով[19]։

Մեր գոտու վրա, յուրաքանչյուր կենդանական պույգի միջև տեղադրված են ռոմբիկներից բաղկացած պատկերներ, որոնց իմաստը տակավին անհասկանալի է։ Հնարավոր է, որ դրանք տվյալ համաստեղությունների երկրաչափական դրսևորումները լինեն։

Հետաքրքիր է, որ Թաքիայում հայտնաբերված բրոնզե գոտու մի շատ փոքր բեկորի վրա պահպանվել է եղջերուի ոճավորված պատկեր, որը նույնպես կետերի միջոցով է կատարված և իր կեցվածքով բավական մոտ է վերը նկարագրված գոտու կենտրոնական վանդակում կանգնած երեք եղջերուներից մեկին[20]։ Գոտու այս բեկորը նույնպես զարդարված է պարույրներով ու կետավոր եռանկյունիներով, հյուսվածքային, շատ փոքր օվալաձև ու կետա-գծային զարդանախշերով։

Պետք է ենթադրել, որ հարուստ զարդամոտիվների միջավայրում պատկերված այս ոճավորված եղջերուն նույնպես խորհրդանշում է երկնային ինչ-որ լուսատու։

Սևանի ավազանի նյութերի մեջ աստղային մի համաստեղություն էլ ներկայացված է Ե. Լալայանի կողմից գտնված հետաքրքրական մի իրով։

Սրա ռոմբաձև միջուկին ներքևից հարում են երկու շրջանակներ, իսկ մնացած մասերից՝ աստղաձև յոթ ֆիգուրներ, որոնց բոլորի մեջ էլ ներգծված են ոճավորված եզան կամ ցուլի գլուխներ։

Եզան ոճավորված գլուխը մտնում է նաև երկու հարթ շրջանակներից վերջինի մեջ։ Պետք է համաձայնվել Հ. Մնացականյանի և Բ. Թումանյանի այն կարծիքին, որ այս իրն ամբողջությամբ իրենից ներկայացնում է մի համաստեղություն։ Նկատի ունենալով այն փաստը, որ բոլոր շրջանակների մեջ ցուլի ոճավորված գլուխներ են, մեզ հավանական է թվում, որ այն գուցե և «ցուլի համաստեղություն» է կոչվել։

Ինչպես երևում է Եզնիկ Կողբացու աշխատությունից, հայերի մեջ երկար ժամանակ արմատացած է եղել այն դաղափարը, թե լուսատուները կենդանիներ են. «...Եւ զի՞նչ զարմանք են ընդ նոցա՝ թէ կերկիրս վասն անչափ մեծութեանն, և զլուսաւորս վասն առաւել պայծառութեանն աստուածս կարծէին, յորժամ ի փայտս և ի քարինս և ի զազանս և ի ճճիս անգամ աստուածս խնդրէին...»[21]։

Մի այլ առիթով Կողբացին գրում է. «Եւ ոչ լուսաւորքն, որպէս յառաջագոյն ասացաք, կենդանիք ինչ են և պատճառք բարեաց կամ չարեաց, այլ միայն յոր կարգեցանն՝ զայն սպասաւորութիւն հարկանեն»[22]։

Վերը նկարագրվածի և Կողբացու բնագրի համապատասխան հատվածի հիման վրա մենք կարող ենք պնդել, որ լուսատուների պաշտամունքը լայն տարածում է ունեցել Հայկական լեռնաշխարհի բնիկների մոտ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայկական լեռնաշխարհում լուսատուներով զբաղվել են նաև ժամանակի գիտության մակարդակով։

Հայկական լեռնաշխարհն իր լանդշաֆտի շնորհիվ պարարտ հող է ստեղծել աստղագիտության զարգացման համար։ Ուստի և զարմանալի չէ, որ այլ պաշտամունքների կողքին տեսնում ենք երկնային լուսատուների պաշտամունքի արտահայտությունը հնագիտական բազմաթիվ իրերի

---

[19] Alfred Jeremias, Handbuch der altorientalischen geisteskultur, Berlin und Leipzig, 1929, էջ 224։

[20] А. А. Мартиросян, «Հպ. աշխ.», էջ 137, նկ. 57.2։

[21] Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ, Եղծ աղանդոց, էջ 141։

[22] Նույն տեղում, էջ 128։

վրա։ Շատ ուսումնասիրողներ, ինչպես այդ ցույց են տվել Բ. Թումանյանն ու Հ. Մնացականյանը իրենց փոքր ուսումնասիրության մեջ, փորձել են աստղադիտության առաջացումն ու զարգացումը տեսնել Հայկական լեռնաշխարհում։ Բերինք Բ. Թումանյանի և Հ. Մնացականյանի կողմից արդեն ցիտված, բայց շատ կարևոր հատվածները։

Աստղադիտության դիտակ Վ. Տ. Օլկոտը գրում է. «Աստղաբաշխության տվյալները համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինող մարդիկ, հավանաբար, ապրել են Եփրատի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան մոտակա շրջաններում»[23]։

Այնուհետև, հենվելով Մաունդերի և Սվարցի ճիշտ դիտողության վրա, ըստ որի երկնային սֆերայի սկզբնական քարտեզը ընդգրկում է հարավային կիսագնդի միայն մի փոքրիկ մասը, Վ. Օլկոտը հետևյալ կարծիքն է հայտնում. «Այն մարդիկ, որոնք երկինքը բաժանել են համաստեղությունների, ամենայն հավանականությամբ ապրում էին 36—42 աստիճան հյուսիսային լայնությունների միջև, այնպես որ համաստեղությունների նշանակման հայրենիքը չի կարող լինել ոչ Եգիպտոսը և ոչ էլ Բաբելոնը։ Հաշվելով, թե որտեղ է այդ դատարկ տիրույթի կենտրոնը համընկնում հարավային բևեռի հետ, մենք ստանում ենք 2800 թ. մինչև ք. ծ., որը ամենայն հավանականությամբ հանդիսանում է համաստեղություններին անուններ տալու հին գործի ավարտման տարեթիվը»։

«Նկատվել է, որ համաստեղությունները պատկերող ձևերի թվում բացակայում են հետևյալ կենդանիները՝ փիղը, ուղտը, գետաձին, կոկորդիլոսը և վագրը. դրա համար էլ մենք կարող ենք հաստատել, որ ոչ Հնդկաստանը, ոչ Արաբիան և ոչ Եգիպտոսը չեն կարող լինել այն տեղը, ուր ծնվել է երկնային սֆերայի գաղափարը։

Հունաստանը, Իտալիան և Իսպանիան մենք կարող ենք դուրս հանել պատճառաբանությամբ, որ համաստեղությունների թվում գոյություն ունի առյուծի պատկերը։ Այսպիսով, հարցին զուտ տրամաբանորեն մոտենալով, մենք կարող ենք հաստատել, որ աստղային պատկերների հայրենիքը կարող էր լինել Փոքր Ասիան և Հայաստանը, այսինքն այն վայրը, որը սահմանափակվում է Սև, Միջերկրական, Կասպից և Էգեյան ծովերով»[24]։

Մեր կողմից քննարկման ներկայացվող հնագիտական նոր նյութերն ու նրանց մեկնաբանությունը, կարծես, գալիս են հաստատելու Օլկոտի տեսակետը և լրացուցիչ նոր տվյալներ են ընձեռում կենդանակամարի ստեղծման վերաբերյալ, նյութեր՝ մանավանդ ժայռապատկերներ, որոնք ժամանակագրական տեսակետից լիովին կարող են համապատասխանել Օլկոտի նշած մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբներին և նույնիսկ նախորդել այդ շրջանին։

---

23 В. Олькотт, Легенды звездного мира (перевод с английского), С.-Петербург, 1914, стр. 8, *տե՛ս նաև Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965, էջ 45։*

24 *Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965, էջ 15—16։*